


104 ԱԼԲԻՆ. ԳԵՍՏԻԿՐԱԿՈՒԹ. ԿԸԽ.  
Վ.Ա.ՔՉՈՒԹ-ՅՈՒՆ

№ 12 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱ-  
Վ.Ա.ՔՃԱԿՈՆ ԴՐԱԴԱՐԱՆ № 12

# Ի՞նչորիսի Գիրք Ե Պետք ՆԱԽԱԴՈՐՈՑԱԿԱՆԻՆ

Մ. ԴԱՎԻԴ-ԱՐԵՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ—ՅԵՐԵՎԱՆ  
1929



ԼՓԿ ԱՊՁԵԾՈՒԹՅՈՒՆ. ԳԵՍԻԵՐԵԿԱԽՈԹ. ԳԼԽ. ՀԱՐՉԱԽԹՑՈՒՆ

ՀՕՆՐԱՄԱՏՁԵԼԻ ՄԱՆԿԱՎԱՐ-  
ԺԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ

№ 12

372.21

A 3616

Ի՞ՆՉՊԻՍԻ ԳԻՐՔ Ե ՊԵՏՔ  
Ն Ա Խ Ա Դ Պ Ր Ո Ց Ա Կ Ա Ն Ի Ն

Մ. ԴՈՒՐԳԱՐՑԱՆ



Պետական հրատարակչություն, Յերևան, 1929

Թույլատրվում ե  
Պետգիտիկորհի կողմից

Հը. № 1073: Գրառեպվար № 2757 (ը): Տիրաժ 2000:  
Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում:  
Պատվեր № 151.

Ի՞նք ՆՇԱՆԱԿՈՒ-  
ԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԳԻՐՔԸ  
ՅԵՐԵՒԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ Խոսքը (զրուց, խոսակ-  
ցություն, պատմելը) մեծ  
նշանակություն ունի յերեխայի կյանքում.  
Գիրքն ու խոսքը պատկերացնում են մանկան  
իդեալները (ցանկալի մտքերը), կազմակեր-  
պում են նրա աշխարհայացքը, հույզերն ու  
ապրումները, լայնացնում են մտքի հորիզոն-  
ները, նոր գիտելիքներ են հաղորդում, ծանո-  
թացնում կյանքին, պարզում են մարդու և  
բնության փոխարարերությունները, հասա-  
րակական կյանքի յերեսութները։ Գիրքը ծա-  
նոթացնում են կյանքի փորձին, հարստաց-  
նում են յերեխայի բառապաշարն ու փորձը,  
ազգում նրա բնավորության վրա և այլն։  
Դժվար չի նկատել այս բոլորը հենց յուրա-  
քանչյուր յերեխայի վերաբերմաբ, վորը  
առիթ են ունեցել գրքերի հետ շփվելու.—

հիշում ե գրքի դեպքերը, հերոսներին, նկար-  
ները, կրկնում ե հեղինակի լեզրակացու-  
թյուններն ու կարծիքները, գործածում ե  
գրքի բառերն ու դարձվածքները, լերեռութ-  
ները բացատրում ե այնպես, ինչպես գիրքն  
ե մեկնաբանում, հետեւմ ե գրքի նկար-  
ներին, վերաբռնադրում ե վորոշ գերեր և  
այլն։ Հին գրականությունը կարդացող յե-  
րեխան աշխատում եր նմանվել Ռոբինզոնին,  
Հիվանդապահ աղջկան (*Մոպասան*), Գրա-  
գրի տղային (*Դ'Ամիչիս*), Անահիտին (*Ազա-  
յան*), Սասունցի Դավթին (*Թումանյան*) և  
այլն։ Այժմ յերեխայի գրական իդեալներն  
այլ են—հեղափոխական գործիչները, քաղա-  
քացիական կոիվների առաջնորդները, մտքի  
ու տեխնիկայի հերոսները, Հնդիկ Զոլն (*Ա.  
Խնկոյան*) ու Փոքրիկ Խոն, Ժուֆան (*Մ.  
Զալկա*) ու Ռիաբցեվը (*Ոգնեվ*) և այլն։

Սակայն միայն հերոսնե-  
շին ու նոր գրքի Սակայն միայն հերոսնե-  
տարբերութՅունը ըով չի, վոր տարբերվում  
էն իրարից հին ու նոր  
գիրքը. այդ տարբերությունը նկատվում է  
գրքի ու խոսքի բարդ կառուցվածքի լուրա-  
քանչյուր կողմում.—ովքե՞ր են այդ հերոս-

ները, ում կողմից են հանդես գտլիս նրանք  
և դասակարգավիճն ի՞նչպիսի ձգտումներ ու-  
նեն, ի՞նչ ե նրանց նպատակը, ում համար  
են աշխատում ու պայքարում, ի՞նչ փոխ-  
հարաբերության մեջ ե նա դեպի իր շրջա-  
պատող լեռնութներն ու մարդիկ։ «Գառ-  
նիկ-ախպերը» (Հ. Թումանյան) գովում ե  
մարդու համբերատարությունը և հավատը  
դեպի չարի կործանումը, Անտառի Մանուկը  
(Աղալսն) փառաբանում ե թագավորի  
գթասրտությունը, Աստղամանուկը (Ու-  
ալլ) — ծնողասիրություն և քարոզում (պատ-  
ժի սպառնալիքով), բազմաթիվ գրքեր գո-  
վարանում են թագավորներին ու իշխաննե-  
րին, շատ հաճախ «խորթ» աղջիկներին ու  
կրտսեր («հիմար») լեղբարներին, ներողա-  
միտներին, հլու-հնազանդներին կամ ճար-  
պիկ-խաբերտներին (Ռեյնիկե աղվեսը) և  
այլն։ Հին գրքում բացակայում եր հասա-  
րակակարգի, տիրող որենքների քննադա-  
տությունը, դասակարգերի պայքարն ու  
ալլ պայքարի նպատակը։ Հին գիրքը լեռե-  
խալին կտրում եր իրականությունից, տա-  
նում նրան հրաշքների ու լեռազների աշ-

խարհը («Արեգնաւզան», «Գոռող Ազգեն»), «Ենչով են մարդիկ ապրում», «Յոթն աղուավ» և այլն). այս բոլորը լերեխալի գըլ-խում շփոթություն եր առաջացնում, վախու սարսափի եր ծնեցնում նրա մեջ, սովորեցնում եր լենթարկվել հզորներին, մեծերին, իսկ շատ դեպքում՝ հավատալ կուլը բախտին։ Հին գրքում գլխավոր դերակատարներն անհատներն ելին, չկար կոլեկտիվ-հերոսը, դասակարգը, պայքարող ու կառուցող մասսան։ Հին գիրքը մեծ մասամբ պասսիվ զգացմունքներ եր ծնեցնում։ չկային վոգեորող, լեռանդ ու աշխուժություն ներշնչող, կազմակերպող ստիմուլներ (գրգիչ, ազդակ), ըմբոստությունն ու հեղափոխությունը դատապարտում եր և առհասարակ լեղած կարգերն որինակելի ու անխախտ եր համարում։ Այս բոլոր նպատակներին համապատասխանում եր գրքի բովանդակությունը, պատկերները, հերոսների բնութագիրը, նրանց վարմունքը, դադափարներն ու լեզուն, գրքի նկարները և այլն։

Մանկական նոր գիրքն այլ նպատակներ և հետապնդում, լելնելով թե ման-

կան («ալժմյան՝ նոր լերեխալի») և թե  
շրջապատի սոցիալ-դասակարգալին ելու-  
թյունից։ Նոր զիրքը հաշվի լե առնում՝ ում  
և ինչի համար ենք դաստիարակում, վեր-  
լուծում և ներկա իրականությունը, յերե-  
խալին ծանոթացնում և մեր շինարարու-  
թյանն ու պալքարին, մոտեցնում և նրան  
արդի իրականությանը. հրաշքների ու սար-  
սափների (զեեր, վոգիներ, փերիներ, կա-  
խարդներ, հանգուցյալ, ավաղակ, հրեշներ)  
փոխարեն նա ծանոթացնում է զիտության  
ու տեխնիկալի նվաճումներին, թռչող գոր-  
դի տեղ—սրբնթաց գնացքին ու ողանավին,  
մենակ հերոսների փոխարեն (Ռոբինզոն,  
Արևամանուկ, Ռընե, Վարդ-Ռիսլի) տա-  
լիս և պալքարող պիոներ-ջոկատը, ման-  
կական կոմունան (Գրալիցա), պարտիզան-  
ների կյանքը («Զմրուխտի հանքը») և այլն։

Հեքիաթների կողմնակից գրողներն ու  
մանկավարժներն այն կարծիքի լեն, վոր  
յերեխան սիրում և Փանտաստիկ-հեքիա-  
թալին Փարուլան (կառուցվածքը). ավե-  
լին—նրանք ասում են, վոր յերեխան ապ-  
րում և յերեակալական աշխարհում և Փան-

տաստիկ նյութերն ավելի լեն համապատասխանում լերեխալի պահանջներին:

Աս մի խոշոր պըռըլեմ ե, վոր դեռ իր վերջնական լուծումը չի ստացել, սակայն խորհրդալին մանկավարժությունը հեքիաթի և մանկան յերեակալության խնդիրներին ունի վորոշ մոտեցում<sup>1)</sup>, վորը կայանում է հետեւալում յերեխալի մեջ չկան միստիկ հակումներ ու խորհրդավոր ուժեր, վորոնք զեկավարում են նրա գործունելությունը, այլ թե հետաքրքրությունները և թե յերեակալությունն արդյունք են յերեխալի կենսական փորձի ու իրերի ծանոթության: Յերեխան սիրում եր «Մոխրատըտիկն» ու «Կարմիր գլխարկը» այն պատճառով, վոր շրջապատողները՝ դարձնում ենին այն յերեխալի հետաքրքրության կենտրոն, վարժեցնում ենին այդ ֆաբուլաներին: Այդ հետաքրքրությունը վոչ թե կենսաբանական ծագում ուներ, այլ արդյունք եր հասարակա-

\*) Ուշագրավ հողվածներ կան այս մասին հետեւալ գրքերում. Живое слово и книжка в дошкольной работе—ред. Ирutiцкой, 1928 г. Книга детям, 1928 г. № 1—6.

կան ազգեցությունների վորոշ դինամիկային  
Բնության ուժերի խորհրդավորությունը,  
շնչավորությն ու կենդանիների մարդկայնա-  
ցումը (անտրոպոմորֆիզմ),—այս բոլորը  
կարող են մնալ իրեն պայմանականություն,  
գեղարվեստական ներազգեցության մեթոդ-  
ներ և վոչ իրեն ռեալ հատկություն կամ  
բովանդակություն։ Կենդանուն մարդկային  
հոգերանական հատկություններ վերագրե-  
լով, այդպիսի գիրքը յերեխային մղում և  
դեպի յերեսութների քառալիին պատկերա-  
ցում, սխալ ըմբռնում։ Յերեխայի յերեսակա-  
յությունն արդյունք և նրա գործունելու-  
թյան, վորի ընթացքում ծանոթ մտապատ-  
կերների համեմատությամբ ու հակադրու-  
թյամբ նաև ստանում և նոր մտապատկերներ։  
Դիրքն ոգնելու յե յերեխային կտարելու  
այս աշխատանքը, ճշտելու իր փորձն ու  
ստացած տպավորությունները։ Հին հեքիաթ-  
ներն այս հանդամանքը հաշվի չելին աւնում։  
Իհարկե, հին գրականությունն ունի չա-  
փազանց ընտիր գործեր, բարձր գեղարվես-  
տական արժեք ունեցող գրքեր («Թոմաս  
Էլլրոր տնակը», «Սիլտ», «Գիքորը», Ուայլ-

դի, Պուշկինի, Անդերսենի հեքիաթները և  
այլն). սակայն պետք ե զգուշությամբ ու  
լընտրությամբ տալ այդ գործերը, նոր մեկ-  
նաբանություն մտցնել, վորոշ դեպքերում՝  
յերբ հնարավոր ե, կրճատել, վերամշտկել և  
այլն:

Մի շարք հեղինակներ (Դերմանիալում՝  
Հերմինիա Մյուլին, Զեխիայում՝ Մատե-  
Զալկա, մեզ մոտ՝ Մարշակ, Յայլցեվ, Առւա-  
լինդեր, Ակսագարսկայա, Խնկոյան և այլն)՝  
աշխատում են գրվածքի հին ձևերն (հե-  
քիաթ, առակ, բալլադա) ոգտագործել նոր  
բովանդակություն արտահայտելու նպատա-  
կով. Ակսագարսկայի հերոսները Մուրճիկ  
ու Մանգաղիկն են (գլուղացու և բանվորի  
յերեխաները, նրանց դաշինքը), Մյուլլենի  
հերոսը՝ գորգագործ Ալին կամ Փոքրիկ հար-  
ցաներն ե, վոր ուղում և պարզել կյանքում  
տիրող անհավասարության պաճառները,  
վերացնելու միջոցները և այլն։ Մի քանի  
նոր հեղինակների վորոշ չափով հաջողվել  
ե այդ. Մյուլլենի «Նոր հեքիաթները» հա-  
փշտակությամբ են կարդացվում. Բարտոն  
մատչելի ձևով տալիս ե ինտերնացիոնալի

գաղափարը, Խնկոյանը և Մ. Դարբինյանը  
ցարը հեքիաթալին հըեշի պտտկերով են ներ-  
կալացնում։

ԽՍՀՄ մեջ մանկական գիրքը քանակա-  
պես շատ ե տճել. բայց շատ քիչ են լավ  
գրքերը, այն ել նախադպրոցականի համար  
(5—8 տ.). պետք ե խիստ ընտրություն  
կատարել, մանավանդ ռուսերեն գրքերի  
նկատմամբ, վորովհետև կան շատ տարբեր,  
նույն իսկ մասնավոր հրատարակչություն-  
ներ. բացի այդ, հայերեն գրքերը մեծ մա-  
սմբ ռուսերեն հաջող գրվածքների փոխա-  
զրություններն են։

Մանկական նոր գիրքը միջազգային դաս-  
տիարակության ու համերաշխության խնդիրներ  
ե դնում, մերկացնում ե դասակարգերի մեջ  
ժրող պայքարն ու ներհակությունը, նպաս-  
տում ե յերեխայի մեջ մատերիալիստական  
(իրական, ռեալ) աշխարհայացք կազմակեր-  
պելուն, աշխույժ ու կենսուրախ վոգի յե ներ-  
շնչում, խրախուսում ե յերեխայի ակտիվու-  
թյունն (ինքնազործունեյություն, նախաձեռ-  
նություն) ու ինքնուրույնությունը, նրա մեջ  
կոլեկտիվիզմն ու հասարակակալյանությունն է  
զարգացնում։

Ակզբում մենք կապե-  
հնագ է ՏԱԼԻՍ ԳԻՐ-  
ՔԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱ-  
ԿԱՆԻՆ ցինք գիրքը կենդանի խոս-  
քի հետ. այս հանգաման-  
քը պատահական չե. գրքի  
գերը շատ դեպքերում նույնանում և կեն-  
դանի խոսքի հետ. որինակ՝ յերբ պատմում  
ես յերեխային գրքի նույթը, կարդում ես  
գիրքը, խոսում յերեխայի հետ գրքի կամ  
նրա նկարների մասին, այս բոլոր դեպքե-  
րում գերիշխող տեղն և բռնում կենդանի  
խոսքը: Սակայն, վորովհետեւ մեր նյութը  
վերաբերում և մանկական գրքին, մենք կանգ  
կառնենք գլխավորապես գրքի հետ տար-  
վող աշխատանքների և գրքի պահանջների  
ու հատկությունների վրա, հարկ յեղած  
դեպքում միայն մոտենալով գրքին՝ իրեն  
կենդանի խոսքի միջոցի:

Մինչև այժմ մենք խոսում ենք ընդ-  
հանրապես մանկական գրքի մասին. մեր ըե-  
րած կարծիքները՝ թե հեղինակների և թե  
գրքերի մասին վերաբերում ելին ըոլոր տա-  
րեքի յերեխաներին մատչելի գրքերին.  
այժմ մասնավորենք նախադպրոցականին  
մատչելի գրքի մասին, նախադպրոցական

յերեխան տարբեր շրջանում տարբեր վերաբերմունք ու մոտեցում ունի դեպի գիրքը և, նպաստ վոր շրջանումն և գտնվում, կարող ե լինել դիտող, ունկընդիր, ընթերցող և վորոշ դեպքերում միայն գրքի քննադատ։ Այսպես 3-4 տարեկան յերեխան գլխավորապես դիտող է (նկարների), 4-6 տ. յերեխան բացի այդ կարող է ունկընդիր լինել, 7-8 տարեկանն արդեն իբրև ընթերցող և հանդես գտլիս, չնայած այն հանդամանքին, վոր նա միաժամանակ և՛ ունկընդիր է, և՛ դիտող։

Յեթե մեր ասածն ամփոփենք, կտեսնենք, վոր նախադպրոցական յերեխային գիրքը նույն ոգուտն և տալիս և նույն նշանակությունն ունի,—մի քիչ ավելի սահմանափակ պահանջներով և այլ բովանդակությամբ ու ձևով, քան թե դպրոցականի համար։ Դիրքն ոգնում և նախադպրոցականին հասկանալու շրջապատող յերեսութները, ծանօթանալու իրերին, հիշելու այս բոլորը։ Յերեխան սովորում է տարբերել գեղեցիկն (դեպք, նկար) ու ճիշտը՝ տգեղից, սխալից, գիրքը նպաստում է լեզվի զարգացմանը, ամրացնում է

խաղի ու աշխատանքի տպավորությունները, նոր ծանոթություն և հաղորդում (անծանոթ կենդանիներ, ուրիշ լերկրների լերեխաներ, մեքենաներ և այլն):

Խնդիրը պարզելու համար  
Ի՞նչորիսի գիրք Ե վերցնենք նախադպրոցականություններին  
ՀԱՐՄԱՐ ԿՐՏՍԵՐ ՆԱ- կան տարիքի լերկու շըր-  
ԽԱԴՐՈՑԱԿԱՆԻՆ կան տարեկանները՝  
3-4 տարեկաններին և մեծ նախադպրոցականները՝ 5-7 տարեկաններին: 8 տարեկաններն անցողիկ շրջանին են պատկանում և հաճախ անցնում են դպրոցականների շրքերը:

Կրտսեր նախադպրոցականի համար (3-4 ա., լերեմն միայն 5 տ.) գրքի ամենադլխավոր կողմը նկարն է. լերեմն նրան միայն նկարն և հետաքրքրում և լերեխան նկարից դենք չի անցնում: Այս տարիքի համար կան հատուկ գրքույկներ, վորոնք միայն նկար են պարունակում, առանց տեքստի (բառերի): Դժբախտաբար մեր կյանքից վերցրած այսպիսի գրքույկներ («նկար-գրքույկ») համարյա չկա, և մեր դաստիարակներն ու մայրերն իրենց փոքրիկների ձեռքը տալիս

Են մուսաստանի հրատարակություններից։  
Յեթե ընտրությունն զգուշությամբ կատար-  
վի (բովանդակության տեսակետից) իհար-  
կե ոռուսական հրատարակությունները կա-  
րող են նույն նպատակին ծառալել.  
շաղկի վրայի կամ միջի տեքստը լինելու  
գեղքում ել միևնույն ե՝ աննկատելի լին-  
մում դիտող լերեխալի համար։

Յեթե ուշադրությամբ դիտենք փոքրի-  
կին, կտեսնենք, վոր նա սկզբում գրքի  
հետ վարվում ե այնպես, ինչպես առհասա-  
րակ այս կամ այն առարկալի հետ. շոշա-  
փում ե, շոյում, գլորում, պոկոտում, ու-  
զում և նկարներին ձեռք տալ, վերցնել,  
ծաղկից հոտ ե քաշում, նկարած բաժակից  
ուղում ե ջուր խմել, լերեխալի հետ խո-  
սում ե, շան վրա հաջում ե ալին։

Սակայն լերեխան հետզհետե ընտելա-  
նում ե գրքին, վարժվում ե՝ ինչպես վերա-  
բերվել, հարցնում ե, ինչ ե նկարած, ինչի  
մասին ե գրած, խնդրում ե պատմել, իրեն  
ծանոթ առարկաները գտնում են նկարների  
վրա, անվանում ե, սովորում ե նոր անուն-  
ներ և ալին։ Գիրքը նրա համար այլևս վո-

ըեւ առարկա չի, այլ ունի իր իսկական (մոտավոր) նշանակությունը. վոչ թե թուղթն ե նրան հետաքրքրում —պատռելու, տըրորելու, ծալծլելու փորձերի համար, այլ նկարը —գրքի բուն նշանակությունը: Իհարկե, այս մոտեցումը ձեռք ե բերվում հետըզհետե, յերեխայի հետ միասին վորոշ աշխատանք կատարելուց հետո:


Այս տարիքի յերեխային գիրքը տալիս պետք է վորոշ պայմաններ ինկատի ունենալ. Նախ՝ լավ կլինի տալ առանձին թերթերի վրա նկարներ, այնուհետեւ շիրմալի նման բացվող նկար-գրքույկներ. այսպիսի նկարները կարելի յե կախ տալ պատերին, դնել սեղանին կամ հատակին, մտցնել նրա խաղի մեջ. որինակ՝ յերեխան տուն ե կառուցել և դռան առաջ մի ծառ ե տնկում (նկար) կամ պահապան շուն և կանգնեցնում: Բատ պահանջի այս թերթերից կարելի յե կտրել ու վորոշ առարկաների նկարներ հաներ:

Ընտրությունն ամեն մի գեղքում ունի իր մեծ արժեքը. պետք ե հաշվի առնել, թե տվյալ մոմենտում ինչն ե հետաքրքրում յերեխային և համապատասխան նկարներ

տալ։ Որինակ՝ յերեխան հետաքրքրվում է գնացքով, պետք և տալ գնացքի նկարը կամ գրքունկը։

Նա հաճոււքով և զիտում ծանոթ իրերի նկարը այստեղ են նրա խաղալիքները, նրա կերակրի ամանը, նրա սիրելի կենդանիները, վորոնց հաճախ և հանդիպում — հավն ու բաղը, շնիկը, կատուն, կոֆի ու տիժը. յերեխան ավելի լի ընտելանում, չի վախենում նրանցից և տղն։

Յերեխային փողոց կամ զբոսանքի տանելիս պետք և գլուրութիւնը տալ նրան՝ զիտելու պատահած իրերը, կենդանիները — սահնակն ու ավտոն, լսել շոգեմեքենալիս ձայնը, մոտենալ գունեղ ծաղիկներին, ձեռք տալ զ սմբցուղներում գրված խաղալիքներին. այս ծանոթությունից հետո տալիս եք նրան նույն առարկաների նկարները, յերեխան հանդիպում ե՞ իրեւ ծանոթների, վերհիշում և նրանց, և նրա մեջ ամրանում են ծանոթ մտապատկերները։ Մեծ քաղաքներում կան մտնկական դահլիճներ, խաղասենյակներ, խաղալիքների թունդարաններ, վորոնց նպատակն ե յերեխաներին։



ծանոթացնել թե շրջապատի առարկաներին  
և թե նրանց նկարներին։ Կենդանաբանա-  
կան այգիներում (որինակ՝ Մոսկվայում)՝  
յերեխաները հեծնուում են իշուկին, ուղտին  
կամ պոնիներին (շոտլանդական փոքրիկ  
ձիեր) լծած սալլակին, մոտենում են նրանց,  
գուրգուրում, կերակրում։

Այժմ տեսնենք՝ թե ինչպիսի նկարներ են  
տրվելու փոքրիկ նախադպրոցականին։  
Իհարկե, կասենք՝ լավ նկարներ. իսկ վճռն  
ե այդ լավը՝ տեսնենք։ Նկարը պետք է  
վառ լինի, պատճառ. դժգույն ու մոայլ  
ներկերը դուր չեն գալիս յերեխային։  
Նկարների կուտակումից պետք է խուսա-  
փել. մի յերեսի վրա մի նկար է լինելու,  
իսկ յերբ տվելի նկարներ կան, ամեն մեկի  
շուրջը ազատ լուսանցքներ են լինելու։  
Խալտաբղետ նկարները հոգնեցնում են յե-  
րեխային։ Պայմանական նկարներ չպետք է  
տալ. որինակ՝ շրջած գեմքը (ծոծրակի կող-  
մից). յերեխան սովոր է գեմքի վրա աշ-  
քեր ու բերան տեսնել, այնինչ՝ նկարը չի  
տալիս այդ. կամ թերի առարկաներ—ձիու  
գլուխ, վոչխար առանց վոտների, կիս-

անդրի<sup>\*</sup>) և ալին։ Անընակտն գույներ չպետք  
ե տալ—կարմիր ծառ, կանաչ ծի և ալին։  
Յերեխան կնկատի այդ անձշտությունը և  
կհարցնի—ժւր և ծիու վոտները, ինչու ծին  
կանաչ և և ալին։

Իրար մոտ միքանի առարկաներ տալիս  
պետք և պահպանել համաշափությունը։  
միենույն թերթի վրա չի կարելի տանձը  
ծառի չափ ցուցադրել կամ ինքնայեռ՝ տան  
բարձրության։ այսպիսի նկարները խճճում  
են լերեխալի մտապատկերները, շփոթու-  
թյուն են առաջացնում։

Նկարների մանրամասնություններն ավե-  
լորդ և տալ (որինակ՝ վարագուցրի զարդերը,  
դեմքի ստվերները)։ Նկարը պետք և պարզ  
լինի։ Պետք և այնպես անել, վոր նկարի  
մեջ զգացվի առարկալի նյութականությունը,  
լերկաթե և փայտե դուլիերի տարրերու-  
թյունը և ալին։ միենույն նկարը պետք և  
տարրեր գրությամբ տալ—որինակ, կենդա-  
նին՝ նստած, վաղելիս և ալին։

Առարկան չպետք և վերևից նկարել. այս-  
պիսի սեղմած նկարը չի ըմբռնի լերեխան։

\* ) Արձան. միայն գլուխը կամ զլուխը և ուսերը.

նույնպես ահսովզոր կլինի կենդանու նկարը  
ուղիղ դիմացի կողմից, յերբ գլուխը ձուլ-  
վում է մաքմակի հետ:

Գրքի մեծությունը նույնպես նշանակու-  
թյուն ունի. մեծ գիրքը դժվար է ձեռքում  
պահելը, թերթելը. գրքի հարմար չափն է  $\frac{1}{4}$   
թերթը ( $20 \times 25$  սմ.). շատ փոքրադիր գիրքը  
նույնպես գրավիչ չի յերեխալի համար:

Նկար գրքույկին զուգընթաց կարելի յէ  
տալ նաև փոքրիկ տեքստով պատկերազարդ  
գրքույկներ, շատ պարզ վոտանավորով կամ  
կարճ ու պարզ պատմվածքով. յերբեմն  
նկարների տակ լինում են հատ-հատ բա-  
ռեր (անուններ) կամ կարճ նախադասու-  
թյուններ: Անհրաժեշտ չե, վոր յերեխան  
կարողանա կարդալ նկարների խարազրերը.  
յեթե փորձում է կարդալ, պետք է ոգնել,  
սակայն չհետապնդել:

Փոքրերը սիրում են աշխուժ, հնչուն  
վոտանավորները, ոիթմը դուր է դալիս և  
հաճախ ծափահարում են ու շարժվում ոիթ-  
մի տակ, կրկնում են և հեշտությամբ հիշում  
ու անգիր անում: Զպետք է սակայն դժվա-  
րահնչյուն, յերկար ու անհասկանալի վո-

տունավորներ տալ, մանավանդ, ալսպիս աշոած, «մանկան լեզվով» (որինակ՝ Հ. Աղաբարի շատ վոտանավորները) կամ անհասկանալի ու անմիտ բառերով լի, որինակ՝ Զանգի, մանգի, չարուխի  
Քթոց զրկենք մենք նուխի...

այս 2 տողում միայն մի բառ կա ճիշտ ու հասկանալի — մենք — վորը (զերանունները) առհասարակ լերեխան չի գործածում:

Դուքեկան են կատակ-վոտանավորները, յեթե զլուրահնչուն ու աշխուժ են. յերեխանները սիրում են կենդանիների ու առարկաների ձայնները (գնացքի, թմբուկի, կովի, շան ձայնները). ալսպիսի վոտանավորներ քիչ կան հայերեն, սակայն կարելի է վորոշ ընտրություն անել Հ. Աղաբարից («Այշաշանակ» . . ), Դ. Աղայանից («Ծիտ եմ, ծիտ եմ» . . ), Հ. Թումանյանից («Շունն ու կատուն» հեքիաթից), Աթ. Խնկոյանից (առածներից, «Նոր շոգեշարժ»-ից և այլն): Հին գառսագրքերում (Մալրենի լեզու, Դասընկեր, Լուսաբեր, մասամբ «Կարմիր արև»-ի 1—3տ.) և ամսագրերում (հատկապես «Հասկերում») կան ալսպիսի նյութեր, սակայն միակողմանի

բնուլիթ ունեն—մեծ մասամբ նյութը բնությունից և վերցրած:

Այս նյութերն անցնելիս նույնպես պետք է ինկատի առնել մանկան հետաքրքրությունը, փորձն ու առողջան:

Մեծ նախադպրոցականը  
ՄԵԾ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԳԻՐՔԸ (5-7 ա.) գիրքը ծառայեց-  
կանի գիրքը նում և իսկական նպա-  
տառակին. նա գրքի հետ չի խաղում—թեր-  
թում և, նայում, մատչելի ընթերցանու-  
թյունը լսում է հաճույքով, յերբեմն ել (7-  
8 ա.) ինքն և կարդում:

Գիրքը նրան հաճույք, ուրախություն և  
պատճառում և մեծ ազդեցություն ունի—  
ոգնում և արտահայտել մտածածը, ճիշտ  
կերպով ձևակերպել միտքը, կանոնավոր  
պատասխանել, ճիշտ հարցեր տալ: Գիրքը  
վորոշ չափով ուսուցչին ուղաստիարակին և  
փոխարինում:

Այս շրջանը յերեխայի հարցասիրության  
շրջանն է. ընության յերեսույթները, մարդիք՝  
մեծերն ու փոքրերը, սրանց փոխհարա-  
բերությունը գրավում են յերեխայի ուղա-  
գրությունը. անվերջ հարցեր և տեղում—

տեղի՝ անտեղի, լերեմն տարորինակ, լերեմն  
ընդհակասակը շատ լուրջ («ինչու կարմիր  
սապոնի փրփուրը սպիտակ ե», «մարդը 2  
վոտի վրա՝ չի գլորվում, իսկ շունը 4 վոտի  
վրա յե կանգնում»). Հ. Մլուլենի «Ինչու»  
պատմվածքը հրաշալի կերպով բնութագրում  
ե այս տարիքի լերեխային։ Անծանոթ ու  
նոր լերեռւթներն ու առարկաները հետա-  
քրքրում են լերեխային—լերկրաշարժը,  
վալրի կենդանիները, ոտար լերկրները և  
այլն։ ԽՍՀՄ լայնածավալ լերկիրն ու հա-  
րուստ բնությունը, բազմազան բնակիչներն  
ու սրանց զբաղմունքները շատ հետաքրքիր  
նէութեր են տալիս այդ տարիքին։ Պետք է  
ստկան չափավորել, տալ այն՝ ինչ մասչելի  
յե, կոնկրետ ու հետաքրքրական։ Հաճախ  
այդ տեղեկությունների հիման վրա լերե-  
խան փոխում ե իր վերաբերմունքը, բնա-  
վորության վորոշ գծեր—որինակ՝ դադա-  
րում ե վախենալ քամուց, կալծակից, սկը-  
սում ե սիրել գորտը, մողեսը, չի խորշում  
միջատներից և այլն, ինարկե, այս գեալքում  
զրքին միանում ե նրա (լերեխայի) աշխա-  
տանքը, բուլսերի ու կենդանիների խնամքը,

զըսսանքներն ու եկակուբսիաները։ Առհաս-  
սարակ նախադպրոցականի գործունելու-  
թյունը չի կարելի սահմանափակել քարա-  
ցած, չեղոքացած ձևերում (սոսկ խաղ,  
զըուց և ալին)։ Այս տարիքը ակտիվ և,  
ընդորինակող, տպավորվող ու լուրացնող.  
Նա հեշտությամբ և ընդորինակում կենցա-  
ղալին գծեր, հաճախ բացասական (ծեսեր,  
թղթախաղ, հայրովանք, իշխելու ձգտում)։  
Գիրքը զորեղ միջոց և ազգելու և խելացի  
ժամանցի, զբաղմունքի, ուսուցման նյութի  
ծավալն ընդարձակ և բնություն, տեխնի-  
կա, աշխատանք, արկածներ (թեթև), հումոր,  
կենցաղ, բանվորի ու գյուղացու կյանքը,  
կարմիր-բանակալին, պիոներ ու հոկտեմբե-  
րիկ, կենինն ու նրա մանկությունը, լերի-  
խաների կյանքը կապիտալիստական լերկըր-  
ներում, գյուղը՝ քաղաքի լերեխալի համար  
և ընդհակառակը։

Յերեխաները սիրում են լերաժշտու-  
թյուն, ցուցեր, շքերթներ, վառ գունեղ  
կահավորություն, պլակատներ, զրոշակներ.  
այս տեսակետից նրանց շատ մոտ են հե-  
ղափոխական տոները։ Դիրքն ու նկարը

նույնապես կարող են մոտեցնել յերեխալիքն  
հեղափոխական արդիականության, պարզել  
տոնի նշանակությունը, խորացնել նրա  
տպավորությունը, ինարկե, յեթե մատչելի  
ձեռվ տրվի:

Հերոսը—այս տարիքի յերեխալիք սիրելին  
և յերեխան ձգտում և նմանվել քաջին,  
համարձակին, խիզախին, ուժեղին։ Գիրքը  
նույնապես կարող է ծառալիք աչք նպատակին,  
ցուցադրելով հեղափոխության առաջնորդ  
ներին, նրանց կյանքն ու պայքարը, հեղա-  
փոխական, անձնուրաց ու ընկերասեր պա-  
տանիներին, կենդանիներին պաշտպանող  
յերեխաներին և այլն։

Գրքի նկարներն այստեղ ել նույն հատ-  
կություններն են ունենալու։

Կան գրքեր, վորոնց նպա-  
ջՎԱՐՃԱԼԻ ԳԻՐՔ կակն ե ուրախացնել,  
ծիծաղեցնել յերեխալիքն «Զվարճալի գիրքն  
անհրաժեշտ ե յերեխալիքն աշխուժ, ուրախ  
տրամադրություն տալու համար» ման-  
կան հուզական աշխարհը հարուստ ե  
զվարճալիքն ու կլոունադան յելք ե տալիս  
այդ հուզերին\*»։ Կյանքում շատ բան կա

\* Ժող. լուս. 1928 թ. № 5. Մ. Դուրգարյանի  
հոդվածը։

ծիծաղելի. ծիծաղում հնամեծերը, թող ծիծաղեն նաև յերեխաները. սակայն վոչ թե անմիտ, անհեթեթ, չարամիտ ծիծաղ՝ խափշիկի սև դեմքի կամ ծաղրածուի կարմիր քթի վրա, այլ ծիծաղ կատակների, անսպասելի վախճանի, քաղքենիական սովորությունների վրա (տես Մարշակի «Բագաժ» գրքունկը): Յերբ յերեխան ծափով կամ տակտով (չափով) կամիր-բանակային ու պիոններական քայլերթ և խաղում, յերբ տեսնում և աժդահա փղի ու կոկորդիլոսի վախը «տնվախ բզեզից», ձլունի մեջ գլորվող յերեխաններին, ուրախանում և, ծիծաղում սրանց վրա,—այսպիսի ծիծաղը առողջ ծիծաղ եւ Մեծ նախադպրոցականին հաճույք են պատճառում անհեթեթությունները, անհավատալի արկածներն ու դեպքերը, նագիտե, վոր ալդպես չե, վոր փիղը չի կարող «ենզելի» պարել, լուսինը չի կարող լիճն ընկնել, ճլոփը (մտչալկա) չեր կարող հետապնդել փնթի յերեխային («Լվացարանը ջրացիր»). բայց նա կուշտ ծիծաղում և այս անհեթեթությունների վրա և ճիշտ (հակառակ) յեղբակացություններ և անում:

Ծիծաղ են պատճառում նաև շուտասեւուկները, կատակները, հանելուկները, բառախաղերը:

Գրքի նկարը բավարագրքի ԽնԱՄՔՆ ՈՒ ԱՌՈՂՋԱՊԱՏԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԳՐԵԼՈւ ՅԵ ՎԵՐԿԵԸ ՀԻՉՎԱՃԱՀԱՆՃՆԵՐԻՆ. ԳԵՂԱՐՎԵՍ-ՄԱԿԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒ ՄԹՄՑԵԼԻ ՆԿԱՐԸ ՃԻՓԱԺԱՆՄԱԼ և առողջապահեկան նշանակություն ունի Իհարկե, անթուլատրելի լեն գուցնը տվող (ներկող) նկարները. Խիստ մուգ ներկը, վոր թափանցում ե թուղթը, ընդունելի չեւ նույնպես ավելորդ են զարդանկաները, վոճավոր տառերը, շատ մանր նկարները (կանցովկա):

Թուղթն ու տառերը նույնպես վորոշ նորմաներ ունեն. շատ փայլուն կամ բարակ կամ վերջապես լերանգավոր (տոն, գունավոր ֆոն) լերեսները դժվարությամբ են կարգացվում. լավագույնն ե՝ պարզ, վորոշ, թարմ ու սև տառեր սպիտակ լերեսների վրա. մանր տառերը, նկարն ու տառերն իրար հետ՝ խառն, խիտ ու լերկար տողերը հոգնեցնում են լերեխալի աչքը:

Լավ ու դուրեկան գիրքը խթանում ե լերեխալի գործունեցությունը. տոիթ ե տալիս խոսելու, պատմելու, նկարելու,

նլութ և տալիս դրամատիզացիալի (դերերով ներկայացնելու), կապում և ընկերների հետ, կարդում են, պատմում, ներկայացնում միասին։

Մեծ նախադպրոցականին դժվար չե գրքի խնամքին ընտելացնել. մաքուր, անվնաս պահել, փշանալու դեպքում կարկատել, պահել դարակում, սեղանին. այս տարիքում կարելի յև վարժեցնել նաև գրքի հասարակական ոգտագործման։

Գիրքը չպետք ե պատահութեագործել ՄԱՆԿԱԿԱՆ ԳԻՐՔԸ Հաբար տալ նախադպրոցականին. հաճախ մեծերը գիրքն այսողես են ընտրում. — տոն ե, հարկավոր ե վորեե նվերով ուրախացնել յերեխային, և նվիրում են առաջին պատահած գիրքը։ Յեթե մեծը, ծնողը գրագետ ե, քիչ թե շատ ծանոթ ե գրքերին, ընտրությունը կատարելու յե գրացուցակներով (կատալոգ), քննադատականներով, աչքի առաջ ունենալով հեղինակին, հրատարակչությունը և այլն. գործին անծանոթ ծնողը կարող է դիմել գրադարանապետին, ուսուցչին, գրավաճառին և խորհուրդի հարցնել՝ թե ինչ գիրք արժե գնել։

Դիրքը պետք է հարմարեցնել լերեխալի պահանջներին ու հետաքրքրություններին. լեթե տեսնում եք, վոր լերեխան հետաքըրք-քրվում և կենդանիներով, գնեցեք կենդանիների նկարներ և այդպիսի գրքեր. լերեխան գնացք կամ ողանավ և շինում (խաղում), տվեք համապատասխան գիրք ու նկար. Հարցնում ե հոկտեմբերիկի կամ պիոների մասին, տրամադրեցեք նման գրականություն.

Մանկական խաղերին կարելի լե ավելացնել գրքի խաղեր—գրադարան, գրախանութ, կազմատուն և այլն. Ոգնեցեք լերեխալին գրքի նկարներից ալբոմներ ու լուսուներ պատրաստելու. Նպաստեցեք, վոր գրքի շուրջը լերեխան իր ընկերների հետ կոլեկտիվ կյանք ու աշխատանք կազմակերպի:

Նախ քան լերեխալին տալը կամ կարդալը, պետք է ծանոթանալ գրքին ու նրա նկարներին, նախապատրաստվել լերեխալի հարցերի համար, անհրաժեշտ գեպքում հանել ավելորդ նկարներն ու տեքստը կամ չկենտրոնացնել լերեխալի ուշադրությունը այդ տեղերի վրա:

Դիրքը կարդալն ու պատմելը նույնակա

վորոշ հմտություն ե պահանջում։ Մեծերը  
շատ անգամ իրենք տարվում են մանկա-  
կան գրքով կամ շահագործում են այն հան-  
դամանքը, վոր յերեխան սիրում ե յերկար  
ժամանակ լսել, կարդալիս կամ պատմելիս  
չի աղմկում, չի խանգարում և այլն։ Սա  
ծայրահեղություն ե. յերեխային ամենից  
տուաջ անհրաժեշտ ե շարժունություն, մինչ-  
դեռ յերկար ու հանգիստ նստելուց, լարված  
լսելուց հոգնում ե, ձանձրանում։ Իսկ սրա-  
նից շատ տնգամ առաջանում ե քմահաճու-  
թյուն, վախ, անհանգիստ քուն և այլն։  
Չպետք ե մոռանալ, վոր յերեխան (մանտ-  
վանդ քաղաքում) շատ բազմազան զբաղ-  
մունք ունի. նա շատ նորանոր բաներ և  
աեսնում, լսում, շոշափում, փորձում տանը,  
փողոցում, բակում, շուկայում — և այս սո-  
լորը՝ լավ թե վատ՝ աղդում ե յերեխայի  
վըա, հոգնեցնում նրան. գլուզում ել չի  
կարելի չափից ավելի զբաղեցնել գրքով.  
այսպիսի գեպքերում յերեխան շատ բառերի  
յե ծանոթանում և առանց գործի հետ կա-  
պելու, շոալլում ե այդ բառերը, շատախո-  
սություն ե անում։

Փոքր նտիւադպրոցականին կարելի յե  
տալ ամսական մեկ նկար-գրքույիլ. կարդալ

կամ պատմել կարելի լե 5—10 րոպե, ամեն անգամ 50—60 բառերի սահմանում:

Մեծ նախադպրոցականին կարելի լե ամսական յերկու նոր գրքութել տալ, ավելի յերկար, վոր հնարավոր լինի կարդալ 15—20 րոպելում: Յերեխաներին ծանոթ հին գրքերը կարելի լե մի քանի անգամ կարդալ. յերեխաներն իրենց սիրած գրքերը շարունակ կարդում են առանց ձանձրանալու: Նկարներն այս տեսակետից այն առավելությունն ունեն, վոր յերեխան (3—4 տ.) ամեն անգամ նայելիս նոր բովանդակություն և մտցնում, նոր մտքեր արտահայտում:

Կարդալու կամ պատմելու ժամանակ յերեխան չպետք եւ ուրիշ բանով զբաղվի. ուտելու ժամանակ կտմ քնելուց առաջ չպետք եւ կարդալ ու պատմել յերեխալին. այդ մոմենտները չտփաղանց լուրջ նշանակություն ունեն մանկան կյանքում. հոգնած ժամանակ չարժե յերեխալին գրքով զբաղեցնել: Պատմելու հարմար ժամանակն եւ առավոտան զբաղմունքների վերջին (մոտավորապես ժ. 11—12) կամ ուտելուց հետո՝ յերբ յերեխան հանգստանում եւ:

# ՅՈՒՅՈՒՆԻ

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ**

**I. Փոքրերի համար (3—4 տ.)**  
**Հայերեն**

Տեսակ	Հեղինակ	Վերևագիր	Արժուածական
1.		Թուչուններ	22 լ
2.		Մեր բակը	20 »
* 3.	Տուլակովա	Փոքրիկ ներ-կարար	20 »
* 4.	Մանասեինա	Ինչ լավ ոգնեցին	20 »
* 5.	Փոխաղը.	Գորտին ազա-տեց	20 »
6.	Սիմակ	Վարսիկի տիկ-նիկը	20 »
7.	»	Ճողակի շապիկը	20 »
8.	»	Նանի թանը	20 »
9.	Խնկո-ապեր	Թխսամերը	
*10.	Վյուգո	Կորել ե մի կա-տու	35 »
*11.	Հ. Թումանյան	Շունն ու կա-տուն Ինքնուրույն նկարների դիտո-ղությունն:	50 »
		Զրույց առանձին նկարների մասին:	

\* Նշանակված են հանձնարարելի գրքերը, մյուս-ները թույլատրելի յեն:

*Литература*

№	Автор	Название	Цена
1.	Ольсуфьев	Игрушки	20 к.
*2.	Тальшина	Про бе-и ме	25 »
*3.	Чуковский	Цыпленок	10 »
4.	Саксонская	Про четыре цвета	45 »
5.	Мексина	Мастера и детвора	75 »
*6.	Чуковский	Кухня	50 »
*7.	Барто	Кто как кричит	
8.	Мирович	Наш завтрак	45 »
9.	Соловьева	Буянка	22 »
*10.	Шварц	Кто быстрее	45 »
*11.	Энгель	Отчего голубей не кормили	22 »
12.	Перец	Где я сам	10 »
13.	Барто	Про Мишку	5 »
14.	Холодов	Веник	22 »
15.	Цехановский	Поезд (кино книжка)	40 »

II. Մեջբի շնորհ (5—8 ա.)

1	Ակտագայուս կայութեա	Թուղթի պատճեան մասնակիութեան մասին	Բավարարացնեան գործադրութեան մասին	Ինչպիսի գործադրութեան մասին	50	6—8	6—8	5—6
2	Ակտագայուս կայութեա	Համապատակ լաւագիր	Ամարքի պատճեան մասնակիութեան մասին	Ինչպիսի գործադրութեան մասին	50	6—8	6—8	5—6
3	Զարգացնեալ կայութեա	Համապատակ լաւագիր	Ամարքի պատճեան մասնակիութեան մասին	Ինչպիսի գործադրութեան մասին	50	6—8	6—8	5—6
4	Լեռնային կա յութեա	Զարգացնեալ կայութեա	Ամարքի պատճեան մասնակիութեան մասին	Ինչպիսի գործադրութեան մասին	50	6—8	6—8	5—6
5	Զարգացնեալ կայութեա	Համապատակ լաւագիր	Ամարքի պատճեան մասնակիութեան մասին	Ինչպիսի գործադրութեան մասին	50	6—8	6—8	5—6
*6	Ներկայացնեալ կայութեա	Համապատակ լաւագիր	Ամարքի պատճեան մասնակիութեան մասին	Ինչպիսի գործադրութեան մասին	50	6—8	6—8	5—6
*7	Տառապահութեա	Փաթեթի պատճեան մասնակիութեան մասին	Փաթեթի պատճեան մասնակիութեան մասին	Փաթեթի պատճեան մասնակիութեան մասին	20	7—8	7—8	5—6
8	Թասպէտնեա	Տառապահութեա	Փաթեթի պատճեան մասնակիութեան մասին	Փաթեթի պատճեան մասնակիութեան մասին	02	7—8	7—8	5—6

16	<i>Բիանիլի</i>	Համեմատական մասնակիություն	Փառավունքը պարունակությունը կազմում է 17%	20
*17				5—7
*18	<i>Երիտրոցիդ</i>	Նոր շաբաթական գործություն	Եթե դեպքը հաջող է, ապա դա կազմում է 18%	50
*19	<i>Գլամիլցամ</i>	Մանկական	Մանկական գործությունը կազմում է 19%	70
*20	( <i>Բիալիգիդ</i> )	Խնձոր-սալամ	Մարդկան գործությունը (Բիալիգիդ) կազմում է 20%	25
21			Փառավունքը կազմում է 21%	20
22			Համապատասխան գործությունը կազմում է 22%	50
23			Պատմվածքները կազմում են 23%	8
24		Բանկուար	Ըստ պատմությունների գործությունը կազմում է 24%	25
			Առանձին գործությունները կազմում են 25%	



ՀԱՅՐԱՄԱՑՉԵԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԲԵՐԸ

1. Մի պատմեք յերեխային
2. Պահպանեցեք յերեխայի բունը
3. Առողջ սնունդ տվեք յերեխային—15 կ.
4. Ինչի՞ մասին յեզ ի՞նչպես խոսել  
յերեխայի հետ
5. Ինչո՞ւ յե յերեխան սնահավատ  
դառնում
6. Ի՞նչ նշանակություն ունի յերե-  
խայի համար շրջապատողների  
որինակը
7. Կառուցեք մանկական հրապարակ—12 կ.
8. Յերեխային մաքրություն սովո-  
րեցրեք
9. Նախադպրոցական յերեխայի դաս-  
տիարակությունը
10. Նախադպրոցականի խաղալիքը
11. Ինչո՞ւ պետք է յէ ևւան խաղա-  
ու աշխատի
12. Ի՞նչպիսի գիրք գԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.  
դպրոցականին
13. Նախադպրոց յ
14. Ի՞նչ ե նախադ-  
րակությունը



FL0038211

[074]

A I  
3616

